Հավելյալ արագություն ծառայության տրամադրման պայմաններ

«Հավելյալ արագություն» ծառայությունը մատուցվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող բացառապես ֆիզիկական անձանց համար նախատեսված **«Տրիո»** ծառայությունների փաթեթի **«Տրիո Անվանական»** և **«Տրիո Պրեմիում»** սակագնային փաթեթների համար: Ակտիվացնելով «Հավելյալ արագություն» ծառայությունը՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ **«Տրիո Անվանական»** կամ **«Տրիո Պրեմիում» սակագնային փաթեթների** Բաժանորդը, ի լրումն իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական արագության, ստանում է ինտերնետի հավելյալ արագություն՝ սահմանված «Հավելյալ արագություն» ծառայության տվյալ տարբերակով: «Հավելյալ արագություն» ծառայությունը տրամադրվում է 3 տարբերակով.

1. **Հավելյալ արագություն 1.** Ակտիվացնելով «Հավելյալ արագություն» ծառայության «Հավելյալ արագություն 1» տարբերակը՝ Բաժանորդը, ի լրումն իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական արագության, ստանում է 5 Մբ/վ արագություն՝ վճարելով 250 (երկու հարյուր հիսուն) դրամ՝ ներառյալ ԱԱՀ ամսավճար:
2. **Հավելյալ արագություն 2.** Ակտիվացնելով «Հավելյալ արագություն» ծառայության «Հավելյալ արագություն 2» տարբերակը՝ Բաժանորդը, ի լրումն իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական արագության, ստանում է 9 Մբ/վ արագություն՝ վճարելով 500 (հինգ հարյուր) դրամ՝ ներառյալ ԱԱՀ ամսավճար: «Հավելյալ արագություն 2» տարբերակը մատուցվում է ֆիզիկական անձանց համար նախատեսված նաև **«Ռինտերնետ»** սակագնային փաթեթի շրջանակում: «Հավելյալ արագություն 2» տարբերակը հնարավոր է ակտիվացնել բացառապես գործող Բաժանորդի մոտ, ով օգտվում է Ծառայությունից դրանց ակտիվացման պահից սկսած առնվազն 1 տարի (365 օր) շարունակ: Սույն կետով սահմանված պայմանների գործողության մեջ մտնելու պահից, բոլոր այն Բաժանորդները, ովքեր կկատարեն սակագնային փաթեթի փոփոխություն **«Ռինտերնետ»** սակագնային փաթեթի շրջանակում և նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից կլինի ավելի ցածր չեն կարող միանալ սույն կետով սահմանված «Հավելյալ արագություն 2» տարբերակին:
3. **Հավելյալ արագություն 3.** Ակտիվացնելով «Հավելյալ արագություն» ծառայության «Հավելյալ արագություն 3» տարբերակը՝ Բաժանորդը, ի լրումն իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական արագության, ստանում է 20 Մբ/վ արագություն՝ վճարելով 600 (վեց հարյուր) դրամ՝ ներառյալ ԱԱՀ ամսավճար:

Հնարավոր չէ միաժամանակ ակտիվացնել «Հավելյալ արագություն» ծառայության միևնույն տարբերակը ավելի քան մեկ անգամ: Հնարավոր չէ միաժամանակ ակտիվացնել «Հավելյալ արագություն» ծառայության մի քանի տարբերակ: